ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը հունիսի 24-ից սկսում է 2011 թվականի դիմորդների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Իտալերեն», «Իսպաներեն», «Պարսկերեն», «Ռուսաց լեզու», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաների միասնական (բուհերի ընդունելության) լրացուցիչ քննությունների կազմակերպման գործընթացը:

Միասնական լրացուցիչ քննությանը (2011թ. բուհերի ընդունելության) կարող են մասնակցել՝

- պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից 2011թ. զորացրվածները,
- սփյուռքի շրջանավարտները,
- այն դիմորդները, որոնք միասնական քննությունների հիմնական փուլին հարգելի պատճառով ի վիճակի չեն եղել մասնակցել,
- այն դիմորդները, որոնք առաջին փուլի քննություններին մասնակցելու համար չեն հայտագրվել,
- բողոքարկման հանձնաժողովի կողմից միասնական լրացուցիչ քննությանը մասնակցելու թույլտվություն ստացած շրջանավարտները:

Միասնական լրացուցիչ քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- լրացնել դիմում-հայտ,
- ներկայացնել ***«ՎՏԲ-Հայաստան բանկ» 160481037341*** հաշվեհամարին փոխանցված, 1500(հազար հինգ հարյուր) դրամի անդորրագիր՝ յուրաքանչյուր քննության համար,
- անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
- 3X4 չափի լուսանկար:

Միասնական քննությունների վճարից (1500 դրամ) ազատվում են

- պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվածները,
- առաջին ու երկրորդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները,
- ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին համապատասխանաբար կցում են զինվորական գրքույկի պատճենը, հաշմանդամության գրքույկի պատճենը, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունների կողմից տրված տեղեկանքների պատճենները, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Դիմում-հայտերը լրացվում և ընդունվում են Գնահատման և թեստավորման կենտրոնում հունիսի 24-ից՝ ամեն օր՝ ժամը 10:00- 17:00, բացի կիրակի օրից՝ հունիսի 26-ից:

Շաբաթ օրը՝ հունիսի 25-ին, մինչև ժամը 14:00:

Հասցեն՝ Երևան, Այգեստան 9/4:

Ընդունման ժամկետն ավարտվում է հուլիսի 2-ին՝ ժամը 16:00-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել **57 54 60** հեռախոսահամարով:

Գնահատման և թեստավորման կենտրոն